Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-032-16.08.2012-ՏՀ-010/2

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

## ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ 400ԿՎ ԼԱՐՄԱՆ ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ՕԴԱՅԻՆ ԳԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ԱՆՑՆՈՂ ՀԱՏՎԱԾԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Սույն օրենքը կարգավորում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ ծրագիրն իրականացնող կազմակերպություն կամ պատվիրատու) և Իրանի Իսլամական Հանրապետության «Սանիր» ընկերության (այսուհետև՝ կապալառու) միջև կնքված կապալի պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) շրջանակներում պատվիրատուի և Իրանի Իսլամական Հանրապետության Արտահանման Զարգացման Բանկի (այսուհետև՝ բանկ) միջև կնքված ֆինանսական համաձայնագրի (այսուհետև՝ համաձայնագիր) և կապալառուի դուստր՝ «ՍԱՆԻՐ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՖԶԵ» ընկերության (փոխատու) միջև կնքված փոխառության պայմանագրի համաձայն՝ Իրան-Հայաստան 400կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի՝ Հայաստանի Հանրապետության տարածքով անցնող հատվածի շինարարության աշխատանքների (այսուհետև՝ ծրագիր) նկատմամբ հարկային և մաքսային վճարների արտոնությունների սահմանման և դրանց կիրառման հետ կապված հարաբերությունները:

**Հոդված 2.** Համաձայնագրով իրականացվող ծրագրի շրջանակներում՝

1. ծախսված միջոցների հաշվին կապալառուի կողմից պատվիրատուին ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը (այդ թվում՝ անհատույց կամ մասնակի հատուցմամբ) ազատվում են ավելացված արժեքի հարկից, իսկ պատվիրատուն ազատվում է «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն առաջացող՝ այդ գործարքների մասով կապալառուի փոխարեն ավելացած արժեքի հարկի գծով հարկային պարտավորություններ կրելու պարտավորություններից,
2. ծախսված միջոցների հաշվին կապալառուն ազատվում է ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում իրականացված տնտեսական գործունեությունից շահութահարկի վճարումից, իսկ պատվիրատուն ազատվում է ոչ ռեզիդենտի կողմից ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում իրականացված տնտեսական գործունեությունից ոչ ռեզիդենտի համար շահութահարկի գծով հարկային գործակալ հանդես գալու պարտավորությունից,
3. բանկը, փոխատուն և Իրանի Արտահանման Երաշխավորման Հիմնադրամը (այսուհետև՝ հիմնադրամ) ազատվում են համաձայնագրով և փոխառության պայմանագրով պատվիրատուի կողմից վճարվող՝ վարկի և փոխառության տոկոսների, դրանց սպասարկման հետ կապված միջնորդավճարների և ապահովագրական վճարների գծով առաջացող շահութահարկից, իսկ պատվիրատուն ազատվում է համաձայնագրով և փոխառության պայմանագրով բանկին, փոխատուին և հիմնադրամին վճարվող՝ վարկի և փոխառության տոկոսների, դրանց սպասարկման հետ կապված միջնորդավճարների և ապահովագրական վճարների մասով ոչ ռեզիդենտի համար շահութահարկի գծով հարկային գործակալ հանդես գալու պարտավորությունից,

4. պատվիրատուն ազատվում է կապալառուի մատակարարած ապրանքների ներմուծման համար Հայաստանի Հանրապետության սահմանին մաքսային մարմինների կողմից գանձվող ավելացված արժեքի հարկից և մաքսատուրքից:

**Հոդված 3.** Սույն օրենքով սահմանված հարկային և մաքսային արտոնությունները չեն տարածվում ծրագրի շրջանակներում կապալառուի՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող ենթակապալառուների վրա:

**Հոդված 4.** Սույն օրենքով սահմանված հարկային և մաքսային արտոնությունները կիրառվում են ծրագրի սկսման պահից և մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ծրագրի շրջանակներում պատվիրատուի մոտ հաշվարկված և չվճարված հարկային և մաքսային պարտավորությունները (կապալառուի փոխարեն՝ ավելացված արժեքի հարկը, կապալառուին վճարված եկամուտներից՝ շահութահարկը, կապալառուի կողմից մատակարարված ապրանքների ներմուծման համար Հայաստանի Հանրապետության սահմանին մաքսային մարմինների կողմից գանձվող ավելացված արժեքի հարկը և մաքսատուրքը, ինչպես նաև դրանց գծով տույժերը և տուգանքները) ենթակա են վերահաշվարկման:

**Հոդված 5.** Սույն օրենքով սահմանված հարկային և մաքսային արտոնությունների կիրառման կարգը՝ ներառյալ արտոնությունների կիրառման համար հիմք ընդունվող գործարքների կատարումը հիմնավորող փաստաթղթերը (պայմանագիր, հաշվարկավճարային փաստաթղթեր և այլն) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Առաջարկությունների ամփոփաթերթիկ

| հ/հ | Առարկության, առաջարկության հեղինակը, նախարարության, գերատեսչության անվանումը (առարկության, առաջարկության ստացման ամսաթիվը) | Առարկության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն |
|---|---|---|---|
| 1 | ՀՀ կառավարություն | Նախագծի 2-րդ հոդվածի մասերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին: | Ընդունվել է: |